Collegii Apostolici Poenitentiariorum signatas, et propria manu subscriptas, ad humilem ipsius supplicationem, gratis concessimus. Dat. Romae apud S. Petrum anno millesimo septingentesimo quadragesimo **6** Die **29** mensis **jovnj** Pontificatus Sanctissimi D. N. Benedicti Papae XIV. Anno **6**.

Fr. Antonius W.

Ord^{s}. S. Franc^{oi}. Ref.^{rm}.

Sigillvm. Poenitentiariorvm.

Domini. Papae.

Թէպէտ վերոյիշեալ նամակներուն համաձայնութեամբ՝ Սարգիս 1746ի վերջին ամիսները վենետիկ դարձած պիտի ըլլայ, սակայն Նուրիներեան Սարգսի դարձը կը դնէ 1747ին։ Առաջին գործն եղաւ՝ վենետիկի մէջ դպրոց մը հաստատել, եւ աշխարհական հայ մանուկներ ընդել տալով՝ զանոնք ուղղափառ հաւատոյ եւ բարոյից մէջ հրահանգելէն եւ ազատ արուեստ մը սորվեցընել տալէն ետեւ՝ ետ ղրկել իրենց հայրենիքը։ Այնուհետեւ ասոնք իբրեւ կրթեալ եւ ուսեալ ուղղափառներ՝ իբրեւ պատուաստ պիտի կցուէին իրենց ազգին եւ լաւ պտուղ յառաջ բերէին։ Ասոնք զի, կը մտածէր, ասոնք իբրեւ աշխարհական քարոզիչներ՝ ազգայիններու մէջ դիւրաւ եղեւմուտք գտնելով, զանոնք աւելի դիւրաւ կրնային սիրալիր խօսքերով շահիլ, քան թէ առաքեալները (միսիոնարները), իբրեւ կայծ մը ածուխի մէջ իյնալով՝ եւ ածուխը հրավառելով։